Հավելված՝
Գյումրի համայնքի ավագանու
2015թվականի հունվարի 19-ի
N 3 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

ՈՒՂԵՐՁ

Հարգելի պարոն դատախազ

2015 թվականի հունվարի 12-ին Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի հետ տեղի ունեցած սարսափազդու ողբերգությունը ցնցել է Գյումրի համայնքի բնակիչներին և ողջ հայությանը:

Ողբերգությունը առաջացրել է համայնքի բնակիչների արդարացի վրդովմունքը: Ազգաբնակչության մեջ տիրող լարվածությունը չի թուլանում, որը հղի է լուրջ հետևանքներով, ինչի ականատեսը եղանք վերջին օրերին: Համոզված ենք, որ ստեղծված իրավիճակի լիցքաթափման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել գործուն քայլեր:

Այդ կապակցությամբ ակնկալում ենք Ձեր միջնորդությունը, որպեսզի հանցագործության նախաքննությունը հանձնվի հայ իրավապահ մարմիններին, որոնք կապահովեն գործի քննության արդարացիությունը և թափանցիկությունը, իսկ դատավարությունը տեղի ունենա Հայաստանի Հանրապետությունում:

Հուսով ենք արդարադատությունը կհաղթանակի և մեղավորները կստանան արժանի պատիժ՝ օրենքի ողջ խստությամբ:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Գ. Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Վ. Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«19» հունվարի 2015 թ.